ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «04» հուլիսի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 30-Ա/Ք

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2018» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N 23-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ և 16-րդ կետերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթի հայտերի գնահատման նպատակով ստեղծել մասնագիտական փորձագիտական խորհուրդ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2018 թվականի մայիսի 7-ի «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթը կազմակերպելու մասին» N 23-Ա/Ք հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի
«04» հուլիս 2018 թ.
N 30-Ա/Ք հրամանի

Մասնագիտական փորձագիտական խորհուրդ

Հ/հ	ԱԱՀ	Գիտական աստիճան	Աշխատանքի վայր, պաշտոն
1	Ասատրյան Ռուզան Մանվելի (նախագահ)	կենսաբանական գիտությունների թեկնածու	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե, գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ
2	Ավետիսյան Ալբերտ Էդուարդի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու	Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա, Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնի ղեկավար
3	Մարգարյան Ատոմ Շավարշի	տնտեսագիտության թեկնածու	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտությունների գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար
4	Մարկոսյան Միեր Վարդգեսի	տեխնիկական գիտությունների դոկտոր	Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ, տնօրեն
5	Մելիքսեթյան Խաչատուր Բորիսի	երկրաբանական գիտությունների թեկնածու	ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ, տնօրեն
6	Չաիլյան Սամվել Գրիգորի	կենսաբանական գիտությունների դոկտոր	ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ, տնօրեն
7	Սարգսյան Սուրեն Թարխանի	պատմական գիտությունների դոկտոր	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, առաջատար գիտաշխատող